ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 348-Ա « 16 » մարտի 2026թ.

«ԵՔ-ՀՍԿԾՄ-26/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի № 1417-Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը, Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի մայիսի 26-ի հ.240-Ա որոշումը և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մատակարարման և տեխնիկական սպասարկման վարչության կողմից ներկայացված Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի վարչական շենքի ճաշարանում հանրային սննդի կազմակերպման ծառայությունների մատուցման նպատակով առաջարկների հարցման հայտը.

1.Ձևավորել «ԵՔ-ՀՍԿԾՄ-26/1» ծածկագրով առաջարկների հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողով և հաստատել դրա ստորև ներկայացվող անհատական կազմը.

Ս. Մելքոնյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մատակարարման և տեխնիկական սպասարկման վարչության պետ /հանձնաժողովի նախագահ/
Հ. Խաչատրյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մատակարարման և տեխնիկական սպասարկման վարչության պետի տեղակալ
Ա. Ավետիսյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մատակարարման և տեխնիկական սպասարկման վարչության գլխավոր մասնագետ
Ա. Մխիթարյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մատակարարման և տեխնիկական սպասարկման վարչության առաջին կարգի մասնագետ

2. Առաջարկների հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղար նշանակել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության ապրանքների գնումների բաժնի պետ Ի.Եղիազարյանին:

3. Սահմանել, որ առաջարկների հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի առաջին նիստը տեղի կունենա սույն կարգադրությունն ուժի մեջ մտնելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում (ք. Երևան, Արգիշտիի փողոց հ. 1, հ. 128 սենյակ):

4. Ուժը կորցրած ճանաչել Երևանի քաղաքապետի 2022 թվականի դեկտեմբերի 2-ի «ԵՔ-ՀՍԿԾՄ-22/1» ծածկագրով առաջարկների հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողով ձևավորելու մասին № 1417-Ա կարգադրությունը:

5.Սույն գործընթացի շրջանակներում պայմանագրի կնքման լիազորությունները վերապահել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության պետին:

6. Սույն կարգադրության կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մատակարարման և տեխնիկական սպասարկման վարչության պետի վրա:

7.Կարգադրության կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ